Եղիշե Չարենց

Ինչքա՛ն կանչես ու տաղ ասես, խելքի արի՝ բա՛վ է, էլի

Ինչքա՛ն կանչես ու տաղ ասես, խելքի արի՝ բա՛վ է էլի,
Առանց անգին գոգալի էլ աշխարհը լեն, լավ է էլի:

Ինչքան էլ խաս, ատլաս հագնի, երեսը ալ, գոգալ անի
Աքլորների հոգի հանող սիրեկանդ հա՛վ է էլի:

Ինչքան էլ ֆանդ, զար ունենաս, ինչքան էյթիբար ունենաս՝
Սիրող սիրտը ծովըն ընկած անօգնական նավ է էլի:

Թեկուզ սիրի, գիրկդ ընկնի, դնես օսկե դափազի մեջ
Կնկա էշխը հոգի հանող անհանգչելի ցավ է էլի:

Վա՛յ քեզ, Չարենց, լա՛վ իմացի, խելքդ թող միշտ գլխիդ մնա՝
Ամենասուրբ խոսքը կնկա արյունաքամ դա՛վ է էլի: